

Հր. Մ. Հովակիմյան

ՇԻՐՎԱՆՋԱԴԵՆ ԵՎ ԹԱՏՐՈՆԸ

Մեծ, անգնահատելի է այն ավանդը, որ անցյալի մեր գրողները գրել են հայ նոր թատրոնի ստեղծման ու ծաղկման գործում: Խորապես գիտակցելով ու բարձր գնահատելով թատրոնի լուսավորչական հեղափոխիչ գերը ժողովրդի հոգևոր կյանքում, հասկապես ազգային զարթոնքի պայմաններում, գրողներն ամեն կերպ օգնում էին թատերական մշակույթի զարգացմանը, քաջալերում էին բեմի անխոնջ մշակներին, նպաստում ինքնուրույն դրամատուրգիայի ստեղծմանը: Եվ բնավ չափազանցություն չի լինի եթե ասենք, որ նաև նրանց ուսերի վրա է բարձրացել հայ թատրոնը, նրանց հոգու կրակով են ջերմացել ցուրտ ու անհրապույր խաղասրահները, նրանց հայրենաշունչ խոսքն է թունդ հանել հազարավոր սրտեր՝ զարթեցնելով ազգային ինքնաճանաչողության վսեմ զգացմունքներ, բարու, գեղեցիկի, արդարի ու ազատության սերմեր ցանկնելով սերունդների սրտում: Գրողներից շատերը ոչ միայն իրենք էին գրում դրամատիկական երկեր, թատերական խմբեր էին կազմում, հսկում էին բեմադրությանն ու գերասանների խաղին, այլև իրենք էին խաղում բեմի վրա: Ինչ փուլից, որ ներշնչված չէին մեկպոմեկից: Չէ որ իրենց ձայնի անաղարտ առողանությունամբ, մաքուր հայերենով մեր լեզվին տալիս էին նոր շունչ ու հմայք, իսկ կերպարները առողորմ էին անբասիր, միամիտ ազնվությամբ: Այդ տեսակետից շատ ուշագրավ գործ է կատարել հայ ռեալիստական արձակի խոշորագույն վարպետ ու դրամատուրգ Շիրվանզադեն:

Շիրվանզադեն շարունակ եղել է գերասանների շրջանում, իր պիեսները բեմադրությունների հետ կապված խոշոր դոտները վերացնելու գործում ցուցաբերել է համառ ու սկզբունքային վերաբերմունք, մասնակցել է փորձերին, գերաբաշխումներին, գերասաններից խորհուրդներ հարցրել այս կամ այն կերպարն ստեղծելիս, հաշվի է նստել խելացի, բանիմաց գերասանների հետ, ինքն էլ իր հերթին օգնել է նրանց՝ հղկվելու բեմական արվեստի մեջ:

Թատերական շենք ունենալու, գերասանների նյութականը, թատերական խմբերի դրուժյունը բարելավելու հարցերը միշտ եղել են Շիրվանզադեի ուշադրության կենտրոնում: 1911 թ. ամռանը Թիֆլիսի հայ դրամատիկական ընկերությունը 35 հազար ռուբլի դրամական անսպասելի նվիրատվություն է ստանում: Իսկույն հրավիրվում է դրամատիկական ընկերության արտակարգ ժողով, որպեսզի որոշում ընդունվի այդ գումարը նպատակասլաց ձևով ծախսելու համար: Ժողովում լուրջ վեճեր են տեղի ունենում: Արմեն Արմենյանը և ուրիշներ պահանջում են այդ գումարով 10—15 շնորհալի գերասանի ուղարկել Մոսկվա սովորելու, ոմանք էլ Շիրվանզադեի գլխավորությամբ պահանջում են այդ գումարով բարելավել գոյություն ունեցող գերասանական խմբերի վիճակը և տեղում կազմակերպել թատերական ստուդիա, ընդգրկելով շնորհալի, ապագա իռոստացող երիտասարդ գերասաններին: Այդ կապակցությամբ մամուլում Արմենյանի և Շիրվանզադեի միջև տեղի է ունենում բանավեճ: Անց-

նում է Շիրվանզադեի առաջարկը և այդ գումարը ներդրվում է ժամանակի թատերական խմբերի դրուժյունը բարելավելու գործին:

Շիրվանզադեն խստորեն քննադատում է դրամատիկական ակումբի ղեկավարներին, որոնք իրենց գլխից մեծ գործեր են բռնում, իրենց ոտքերն իրենց վերմակի շափով չեն մեկնում, նախաձեռնում են այնպիսի գործեր, որ չեն կարողանում տակից դուրս գալ: «Այսօր մեզ ոչ դրամատիկական ակումբ փքված անունով մի հիմնարկություն է հարկավոր, և ոչ նորա ղեկավարների ևրեակայության պտուղ—մեծամեծ ծրագիրներ: Այսօր մեզ նախ և առաջ հարկավոր է մի դերասանական կազմակերպված խումբ, թող լինի այդ խումբը բաղկացած գոնե տեղական ցիրուցան եղած ուժերից»¹:

Նա պահանջում էր, որ դրամատիկական ակումբի ղեկավարները անցնեն կոնկրետ գործի, և ոչ թե «անգործության մեջ օդային ամրոցներ» կառուցեն: Այնուհետև նա մի շարք կոնկրետ առաջարկներ է անում, որպեսզի թատերական խմբերի ղեկավարներն առաջնորդվեն դրանով: Ամենից առաջ նա պահանջում է, որ հրավիրեն «գործին շատ թե քիչ հմուտ մարդ» և հանձնարարեն նրան ռեպերտուար, խումբ կազմելու գործը: Կոնկրետ միջոցառումներ ձեռնարկեն դերասանների նյութականը, բեմական ծախսերը ապահովելու համար: Ելույթներն սկսել փոքրից, ապա նորմալ հունի մեջ ընկնելուց հետո նոր ձեռնարկել մեծ-մեծ գործեր, ոչ թե փքուն ծրագրեր կազմել, մեծամեծ խոստումներ տալ ու ոչինչ չանել:

Շիրվանզադեն զայրույթով է գրում ոչ միայն այն մարդկանց մասին, ովքեր բնավ չեն հետաքրքրվում հայ թատրոնի ու դրամատուրգիայի զարգացման գործով, այլև այն թատերասերների մասին, ովքեր իրենց լավ չեն պահում թատրոնում և ցուցաբերում են վատ արարքներ: «Վերք Հայաստանին» բեմի վրա» հողվածում, խոսելով պիեսի և դերասանների խաղի դրական կողմերի ու թերությունների մասին, վերջում նա գրում է. «Անտանելի էր հանդիսականների վարմունքը: Ամեն բան իր շափն ունե, նաև գոռոցները: Կարելի է ծափահարել, կեցցեններ կանչել, բայց գոռալ և աթոռներ կոտրել—անվայել է: Վերջապես ծափահարություններն էլ սահման ունեն: Դերասանը ներս է գալիս՝ ծափահարում են, դուրս է գալիս՝ ծափահարում են, սուրը շարժում է նույնը, ձայնը բարձրացնում է նույնը: Դա արդեն փողոցային գոհակության վերջին սահմանն է: Այդ տեսակ հասարակությունը երբեք չի կարող դերասաններ կրթել: Եվ վայ այն դերասանին, որ այդ ծափահարություններին մեծ նշանակություն կտա...»²:

Շիրվանզադեն քննադատում է նաև հակառակ դիրք գրավողներին: «Զարլեի մորաքույրը» և «Հայրական տուն» պիեսների ներկայացման մասին 1898 թվականին գրած հողվածում ասում է. «Մեզ համար անհասկանալի է Թիֆլիսի հայ հասարակության ներկա սառնությունը դեպի մայրենի բեմը, այն հասարակության, որ ամբողջ ձմեռվա ընթացքում մի օրինավոր հայ ներկայացում չի տեսել: Եթե նա երեակայում է, թե իր ճաշակը խստապահանջ է, խրդճում ենք նրան: Ծշմարիտ է, հայ դերասանական խումբը շարունակում է նա, դեռ հեռու է նուրբ ճաշակ ունեցողներին բուն գեղարվեստական բավականություն պատճառելու աստիճանից, բայց նուրբ ճաշակ ունեցողներին, և ոչ մասսային: ՇՀայ խումբն,—գրում է նա,— այնքան էլ վատ չէ, որ չկարողա-

¹ Շիրվանզադե, Երկերի լիակատար մոդովածու, հատ. 9, 1955, էջ 155:

² Նույն տեղում, էջ 186:

նա հաջողությամբ մրցել դիցուկ հենց մի Սինկինիկովի կամ Լյուզվիկովի հետ, որոնց ներկայացումներն այնպիսի եռանդով այցելում էր Սոլովակի պլուտոկրատիան»³։

Շիրվանզադեն իր հոգվածներում բացասաբար է խոսում թատերական որոշ ուղեղնաբանների մասին։ Թատերական ուղեղնաբանները, ասում է նա, ամեն մի պատահական մարդ պրում է, կարծես թե «հայ թատրոնը, ինչպես և հենց պրականությունը, փողոցում դառնա մի հասարակական կշեռք է, որի վրա կարող է բարձրանալ ամեն մի անցորդ յուր ծանրությունը կշռելու համար, նույնիսկ սովորական մեկ սանտիմր ձգելով այնտեղ։ Հաճախ թատրոնական քրննադատի պաշտոնը տրվում է նորավարտ ուսանողներին։ Ա՛խ, այս նորավարտ ուսանողները»⁴։

Շիրվանզադեի կարծիքով թատերական որոշ ուղեղնաբաններ, թերթեր աշխատում են վարկաբեկել դրամատուրգներին, դերասաններին, դրանով իսկ վնասում թատրոնի առաջադիմությունը։ Ընդհատ է,—գրում է Շիրվանզադեն,—անուն վաստակած դերասաններն արհամարհում են թերթերի այդ տենդենցիոզ կարծիքները, բայց և այնպես այս կամ այն շափով «նորահաս ուժերին» գցում են շփոթության մեջ։ Նա մամուլից, թատերական ուղեղնաբաններից պահանջում է, որպեսզի լինեն անաշու, իրենց բարի ու խելացի խորհուրդներով օգնեն դերասանին, բեմական գործիչներին՝ օրավուր լավ հունի մեջ դնելու թատերական գործը։

Շիրվանզադեն իր թատերական հոգվածներում կանգ է առնում նաև դերասանների կուլտուրայի, մտահորիզոնի վրա։ 1907 թ. գրած իր հոգվածներից մեկում նա գանգատվում է, որ ժամանակակից դերասանները սահմանափակ են, զուրկ անհրաժեշտ կուլտուրայից, չեն աշխատում իրենց վրա։ Ձուներենալով բեմական և գեղարվեստական կանոնավոր կրթություն,—գրում է նա,—նրանք չեն աշխատում իրենց միտքն ու ճաշակը մշակել գոնե ինքնակրթությամբ։ Իրականապես կարելի է ասել, որ հազվագյուտ է այն դերասանը, որի հետ մի զարգացած մարդ կարողանա կես ժամ զրուցել։ Գեղարվեստի տարրական օրենքներին անծանոթ, նրանք չունեն և գրականական զարգացում»⁵։ Շատերի մտավոր պաշարը, նկատում է նա, մի քանի ժամանակակից պիեսներից դերեր չի անցնում։ Կան դերասաններ, որ չեն հասկանում նույնիսկ այն պիեսների իմաստը, որոնց մեջ դեր ունեն։ Կան և այնպիսիներ, որ ոչ հայերեն, և ոչ մի ուրիշ լեզվով ուղիղ գրել գիտեն։

Դրա հետ կապված նա առաջ է քաշում ռեժիսուրայի հարցը։ Հայոց թատրոնի պատմությունից հայտնի է, որ 60-ական թվականներից սկսած հայ բեմը պրոֆեսիոնալ ռեժիսյոր չի ունեցել։ Ըստ Շիրվանզադեի այդ է պատճառը, որ դերասանները չգիտեն ճիշտ արտասանել, աչքները հուշարարից չեն հեռացնում, նրանց միմիկական խաղերը, շարժումները չեն բխում տվյալ պիեսի, ստեղծած կերպարի էությունից։

Ի դեպ ընդհանուր թատրոնի պատմությունից հայտնի է, որ մեծ գրամատուրգները, սկսած էսքիլեսից, Սոփոկլեսից մինչև վերածննդի ու լուսավորչական դարաշրջանի դրամատուրգները իրենք ևն բեմադրել իրենց գործերը՝ կատարելով ռեժիսյորի պարտականություն։ Հայ իրականության մեջ այդպիս

³ Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, 1955, հատ. 9, էջ 237։

⁴ Նույն տեղում, էջ 284։

⁵ Նույն տեղում, էջ 286։

են վարվել Աբովյանը, Սունգուկյանը, Շիրվանզադեն, Կան փաստեր, որ Շիրվանզադեն խաղացել է մի շարք պիեսներում⁶, երբեմն էլ իր այս կամ այն պիեսը բեմադրել է ուղղակի ինքը: Եղել են նաև դեպքեր, երբ հրաժարվել է բեմադրելուց, որովհետև դերասանների ծուլությունը, անպատասխանատվությունն ու անհոգությունը նրան հիասթափեցրել են: Այդ տեսակետից ուշագրավ է 1910 թ. հուլիսի 6-ին նշանավոր թարգմանիչ և թատերական գործիչ Տիգրան Հովհաննիսյանին ուղղված նամակը.

«Հարգելի պարոն Հովհաննիսյան,—գրում է Շիրվանզադեն,—մասամբ ուրախ եմ, որ ռեժիսյորության խնդիրը չհաջողվեց: Ներկա հանգամանքներում դժվար է գործ ունենալ հայ բեմի հետ, ի նկատի ունենալով հայ դերասանների անհոգությունը և առասպելական ծուլությունը: Բեմի վերաբերմամբ իմ և նրանց պահանջների մեջ ահագին անդունդ կա, որը շատ-շատ պիտի լցվեր լրագրական վայրահաշություններով»⁷:

Նա տանել չէր կարող այն դերասաններին, որոնք ծիծաղ կորզելու համար դիմում էին հազար ու մի ծամածուծությունների, պատճառաբանելով, թե ժողովրդին այդ դուր է գալիս: Նա դեմ էր էժանազին ներկայացումներին: «Ժողովրդական էժանազին ներկայացումներով,—ասում է նա,—դուք ոչ տաղանդավոր դերասաններ կունենաք, ոչ շքեղ բեմ, ու արդուզարդ և ոչ մանավանդ ինքնուրույն ռեպերտուար»⁸:

Նա գրեթե իր բոլոր հոգվածներում քննադատում է դերասանի ցածրորակ արվեստը, պահանջում է, որ նրանք հարգեն հանդիսականներին և իրենց արվեստով բավարարեն նրանց մտավոր ու հոգեկան պահանջները: Նա գտնում է, որ բեմական գործիչները, դրամատիկական ընկերության անդամները պետք է լուրջ մտահոգվեն այդ ուղղությամբ, բառի լայն իմաստով հոգևոր սնունդ տան հանդիսականներին, որպեսզի նրանք գոհունակությամբ հռանձան դահլիճից:

«Մարդիկ,—գրում է նա,—դրամ են տալիս և փոխարենը պահանջում են հոգեկան հաճույք: Ոչ ոք չի կարող հաճույք վայելել, տեսնելով բեմի վրա դերերի ծանրության տակ տանջվող ու տառապող դերասաններ, բարբարոսական թարգմանություններ»⁹. այնուհետև բերում է մի շարք օրինակներ դերասանների անբարեխիղճ վերաբերմունքը, անպատասխանատվությունը հաստատելու համար: Շիրվանզադեն առանձին սիրով ու ջերմությամբ է գրում Զմշկյանի, Աղամյանի, Սիրանույշի, Արելյանի և հայ բեմի մյուս հսկաների մասին: Այդ ժամանակ Կովկասում գործում էր թատերական շորս խումբ, ուր աշխատում էին մոտ 100 դերասան-դերասանուհիներ, այդ խմբերի գործունեությունը, նրանց հաջողությունները և անհաջողությունները միշտ ևղել է նրա ուշադրության կենտրոնում:

Շիրվանզադեն Աղամյանի արվեստի գնահատման հարցում հանդես է բերում բարձր սկզբունքայնություն և հարձակվում է նրանց վրա, ովքեր փորձում են նսեմացնել նրա արվեստը: «Մշակ»-ը ամեն կերպ ձգտում էր թերահանադատել Աղամյանին և քիչ պայքար չի մղել նրա դեմ՝ դառնություն պատ-

⁶ 1895 թվականին, երբ ականավոր դերասան Դ. Պետրոսյանը Թիֆլիսում բեմադրեց «Ուրիկ Ակոստա» պիեսը, այդ պիեսում Շիրվանզադեն խաղում էր դր Սիրվանի դերը: Այդ պիեսում խաղացել են նաև Թումանյանը և Աղամյանը:

⁷ Գրականության և արվեստի թանգարան, Տիգրան Հովհաննիսյանի ֆոնդ, 108:

⁸ Շիրվանզադե, ներկերի լիակատար ժողովածու, հատ. 9, էջ 341:

ճառելով հանճարեղ արվեստագետին: Շիրվանզադեն, Թումանյանը, Աղայանը և մեր մյուս գրողները ժամանակին հակահարված են տվել մշակականներին և պատշաճ բարձրության վրա պահել Աղամյանի մեծությունը: Աղամյանի թշնամիներին Շիրվանզադեն համարում էր մեղսյալներ, որոնք աշխատում էին Աղամյանի զորավոր հանճարը նսեմացնել:

Մեծ դրամատուրգը դառնում է Աղամյանի երկրպագուն, բարձր է գնահատում նրա արվեստը: Խորհուրդ է տալիս հայ բոլոր դերասաններին օրինակ վերցնել նրանից: «Վատ չէր լինի,—գրում է Շիրվանզադեն,—որ մեր մյուս դերասանները ևս հետևեին նրա օրինակին (խոսքը Աղամյանի մասին է.—Հ. Հ.), այն է՝ աշխատեին ընթերցանությամբ մի-փոքր ընդարձակել իրենց մտավոր հորիզոնը»:

Աղամյանին Շիրվանզադեն համարում է մի այնպիսի հանճար, որ մեր անցյալի մեծություններից չի գտնում այնպիսին, որ համեմատության մեջ դնի նրա հետ: «Թող ինչ ուղում են ասեն,—գրում է Շիրվանզադեն 1916 թ., «Իրավ որ նա մեծ էր» հոդվածում,—ես հայի ազգային պատմության մեջ սկսած նույնիսկ մեր այնքան գովված և իրավ գովաբանության արժանի միջնադարյան բանաստեղծներից, չեմ ճանաչում մի անուն, որ արժանի լիներ Աղամյանի անվան կողքին դրվելու իբրև գեղարվեստական հավասարություն»⁹:

Համեմատության մեջ դնելով աշխարհահռչակ ծովանկարիչ Այվազովսկու հետ, նա ասում է. «Խոսում են նկարիչ Այվազովսկիի մասին, իբրև Աղամյանին հավասար հանճարի: Թվում է ինձ, որ եթե այսօր մի հրաշքով երևան դար մի հայ նկարիչ, որ կարողանար կտավի վրա վերստեղծել Աղամյանի գեղարվեստական պատկերը, նա կդառնար ավելի, քան մի Այվազովսկի...»¹⁰:

Շիրվանզադեն Աղամյանի արտիստական մեծությունը բնորոշում է այսպիսի մի շքեղ պատկերով. «Երաման համարվում է արվեստների թագուհի, որ իր հավասարը չունի: Շեքսպիրն այդ թագուհու ամենաառաջին իշխանն է: Արդ, ինչ անուն տալ այն արվեստագետին, որ մեծագույն իշխանի գերագույն զենքերից մեկն է ևղև: Ինչ անուն, բացի «մեծ» անունից»:

Շիրվանզադեն շատ բարձր է գնահատում նաև Հովհաննես Աբելյանին: Նրան համարում է «Աղամյանի արժանավոր հաջորդը»: Աբելյանի Օթելլոն, ասում է նա, Վենետիկի վաճառականը (Շեքսպիր), Կարլոսը, Ֆրանցը, Ֆերդինանդը (Շիլլեր), Շտոկմանը (Իբսեն), էռնանին (Հյուգո) վկայում են, որ իսկապես Աղամյանի շարունակողն է: Նա հիացած է Աբելյանի ձայնով, դիմախաղով: «Նրա խաղը,—գրում է Շիրվանզադեն,—անկեղծ է, բնական և միշտ բաղձակողմանի: Երբեք նա մի դերում չի հիշեցնում յուր մի ուրիշ դերը, ինչպես դերասանների մեծամասնությունը: Նրա ձևերը, շարժումները, արտասանությունը, առոգանությունը, քայլվածքը, ծիծաղը, գրիմը, մի խոսքով՝ խաղի արտաքին ամբողջ երանգը,—ասում է նա,—միշտ համապատասխանում է ներքինին և հավատարիմ հեղինակի գծագրածին: Աբելյանի «հայը հայ է, ռուսը՝ ռուս...»¹¹:

Մեծ վիպասանը բարձր է գնահատում նաև անմահ Սիրանուշի բեմական արվեստը, նրան համարում է բարձր կուլտուրայի տեր, սքանչելի առոգանու-

⁹ Նույն տեղում, էջ 470:

¹⁰ Նույն տեղում, էջ 470—471:

¹¹ Նույն տեղում, էջ 287:

թյուն ունեցող դերասանուհի: «Տիկին Սիրանուշին,—գրում է նա,—տակավին ամբողջ զլիսով բարձր է պահում խմբից՝ նրա սքանչելի առողջանությունը, արտասանությունն ու ձայնը: Այս կողմից նա մրցակից չունե: Հայ խմբի այժմյան դրությամբ մեջ այս մի խոշոր առավելություն է: Ոչ ոք չգիտե հայ լեզուն այնքան նուրբ արտասանել ու մինչև անգամ ղեղեցկացնել, որքան տիկին Սիրանուշը»¹²:

Մեծ վիպասանը համառորեն պայքարել է նաև ինքնուրույն դրամատուրգիա ստեղծելու ուղղությամբ: Նորություն չէ այն միտքը,—գրում է նա,—թե առանց առողջ ուսկերտության թատրոնի վերածնության համար գործադրված բոլոր ջանքերն ապարդյուն են: Տողերիս հեղինակը, շարունակում է նա, այս մասին շատ անգամ է գրել: Դրել են նաև ուրիշները: Առողջ ուսկերտության միայն թարգմանականով կնշանակի ենթարկել նրան հյուծախտ ստանալու և մահացման վտանգին: Չկա աշխարհի երեսին մի ազգ, որի թատրոնը թարգմանական պիեսներով ապրելու ցնորքն ունենա: Ծախսեցեք թեկուզ միլիոններ, ասում է նա, ունեցեք թեկուզ տասնյակ հանճարեղ դերասան ու դերասանուհիներ, չեք փրկի թատրոնը, «թե չունեք ինքնուրույն պիեսներ»:

«Թարգմանական պիեսները թատրոնի համար,—գրում է Շիրվանդադեն,—օժանդակիչ ուժեր են, ուրիշ ոչինչ: Ունեք ինքնուրույն ուսկերտություն, կունենաք և թատրոն. չունեք, մի երևակայեք, թե ձեր պահածը ղեղարվեստական տաճար է»¹³:

Նա պահանջում է, որ թատրոնների ղեկավարներն անսահման հոգատարություն ցուցաբերեն այն գրողների նկատմամբ, ովքեր փորձել են կատարում ինքնուրույն դրամատուրգիայի ուղղությամբ: «Ողորմելի է այն թատրոնը,—ասում է նա,—որ օտարների խոհանոցի փշրանքներով է կերակրվում: Այն թատրոն չէ, արվեստ չէ, այլ մտքի մուրացկանություն»: Նա գտնում է, որ այդ ուղղությամբ ոչ միայն պետք է մտահոգվեն թատրոնների ղեկավարները, դրամատիկական ընկերության անդամները, այլև դերասանները, գրողները, չի կարելի միշտ օգտվել օտարների խոհանոցից: «Մենք առայժմ չունենք ինքնուրույն ուսկերտություն,—ասում է նա,—շահագործում ենք իբրև ձրիակերներ, օտարների միտքը: Պեսք է մեր թատրոնի ղեկավարները, մանավանդ դերասանական խմբերը հասկանան, որ այդ վիճակն ամոթալի է: Եվ այդ ամոթալի վիճակը շարունակվելու է մինչև այն ժամանակ, քանի որ կզլանանք խրախուսել և քաջալերել ինքնուրույն ուսկերտության ստեղծելու փորձերը: Թատրոն կառավարողները պարտավոր են դերադասել ինքնուրույն պիեսները թարգմանություններից: Փույթ չէ, որ նրանք թույլ են և չեն կարող հավասարվել եվրոպականներին, պետք է այնուամենայնիվ դերադասվեն: Այդպես են անում բոլոր քաղաքակիրթ ազգերը, այդպես պետք է անենք և մենք, այլապես մենք ինքնուրույն ուսկերտության չենք կարող ունենալ և ստրկաբար մեկ լավ պիեսի հետ ներկայացնելով տասը անպետք թարգմանական պիեսներ, մենք կսպանենք թատրոնը, ինչպես անում են այժմ բոլոր հայ դերասանական խմբերը»¹⁴:

¹² Նույն տեղում, էջ 253:

¹³ Նույն տեղում, էջ 376:

¹⁴ Նույն տեղում, էջ 341:

Շիրվանզադեն, ընդգծելով ինքնուրույն դրամատուրգիա ստեղծելու հարցը, դրա հետ զուգընթաց առաջին պլանի վրա է քաշում թեմայի հարցը՝ «Հասարակությանը կարելի է թատրոն գրավել միայն ինքնուրույն պիեսներով, եթե միայն նրանց նյութը ժամանակակից կյանքից է վերցված», ասում է նա:

Մեծ վիպասանը համառորեն պայքարում է հայ ազգայինների ու լիբերալների կողմից թմրկահարվող նացիոնալիստական փթած դրամատուրգիայի դեմ: Նա շատ բարձր էր գնահատում Սունդուկյանի դրամատուրգիան, որը հայ բեմ գալով դուրս նետեց «վարդապետական քարոզներով» ազգային կամ «մոլեռանդ գաղափարներով» կառուցված ողբերգությունները:

Հարյուրավոր փաստեր կարելի է բերել նրա կյանքից ու գործունեությունից և ցույց տալ նրա ջանքերը բեմական գործիչների, դրամատուրգների, դերասանների հետ: Վերջիններս, երբ որևէ հարց լուծելու կապակցությամբ նեղն էին ընկնում, իսկույն դիմում էին նրան: Քիչ չի պատահել, որ Շիրվանզադեն կռնկրեալ օգնություն է ցույց տվել թատերական այս կամ այն խմբին: Նրա խոսքը բոլոր կազմակերպությունների համար եղել է հրաման: Այդ տեսակետից ուշագրավ է Շիրվանզադեին 1911 թվականի մայիսի 25-ի թվակիր բեմական ակնանավոր գործիչ Արամ Վրույրի ուղղած նամակը.

«Սիրելի Ալեքսանդր.

Հայ բեմի ձայնը համարյա լուած է իսպառ, և հնչելու համար սպասում է եկվոր, պատահական դերասանների, որոնք իրենց գործի բերմունքով կարող են և մի քանի տարի բոլորովին չգալ: Այսօր դու մեր բոլորիս գուրգուրանաց և փայփայանքի առարկան ես, քու խոսքը, գեղարվեստական խոսքը այսօր հավասար է հրամանի, լավ և կամ պատշաճավոր չէր լինի, եթե քեզ շրջապատող Բաքուի ինտելիգենցիայի ներկայացուցիչներին ներշնչելի, խրախուսելի, որ նրանք նորից ձեռնարկեն հայ բեմը վերակենդանացնելու գործին. թե ինչ կտաք իմ առաջարկությունը հրապարակի վրա դնելու, դուք ինձանից լավ գիտեք, միայն համոզված եմ, որ ձեր այսօրվա ներկայությունը հայ բեմի գոյության առհավատչյան կարող է լինել»¹⁵: Արամ-Վրույրի այս նամակն ստանալուն պես Շիրվանզադեն անմիջապես անցնում է գործի: Արդյունքն լինում է այն, որ նորից սկսում է գործել Բաքվի թատերական խումբը:

Մինչև իր փառապանծ կյանքի վերջը Շիրվանզադեն հոգու խորքում պահեց թատրոնի նկատմամբ պատանությունյան օրերի սրբազան ակնածանքը, մրնաց որպես հայ թատրոնի մեծ բարեկամն ու ուսուցիչը, իր դրամատիկական անմահ երկերով, խոսքով ու խորհրդով, իր հեղինակության ողջ ուժով կերտում էր մեր թատրոնի հոյակապ շինությունը և նրա հետ միասին կմնա անմեռ:

Грайр Овакимян

ШИРВАНЗАДЕ И ТЕАТР

Р е з ю м е

Вопросы создания самостоятельной драматургии, улучшения материального состояния артистов и театральных групп всегда были в центре внимания Ширванзаде.

¹⁵ Գրականության և արվեստի թանգարան, Շիրվանզադեի արխիվ, № 89.
Տեղեկագիր 9—2

Характеризуя и оценивая огромное значение таких светил армянской сцены, какими являются Адамян, Абемян, Сирануш, Ширванзаде, в то же время возмущается по поводу руководителей театральных клубов и всех тех людей, которые проявляют непростительное равнодушие к вопросам развития армянского театра и драматургии.

Вместе с тем в статье говорится об отношении Ширванзаде к различным мероприятиям, предпринятым для армянской сцены, к деятельности отдельных работников театра и театральных групп.